

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թ.
հունիսի 4-ի նիստի N 23
արձանագրային որոշման

Ոչ պաշտոնական թարգմանություն

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՎԱՏՐԻԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՍԻՆԵՄԱՅԻ ՆԵՐՔՈՒ

Կնքված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ,

Ի դեմս

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

(այսուհետ՝ «Փոխառու»)

և

Էրստե Բանկ

DER OESTERREICHISCHEN SPARKASSEN ԱԳ

(այսուհետ՝ «Փոխատու»)

Միջև

<Արամ Խաչատրյան ֆիլիարմոնիկ նվագախումբ պետական ոչ առևտրային
կազմակերպության վերազինման> ծրագրի իրականացման համար

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
1 ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՀԱՇԻՎ
1.1 ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ Error! Bookmark not defined.
1.2 ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՀԱՇԻՎ
2 ՏՈԿՈՍ 11
2.1 ՏՈԿՈՍԻ ՎՃԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՐԿ 11
2.2 ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ և ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 11
2.3 ՏՈՒԳԱՆՔԻ ՏՈԿՈՍՆԵՐ 12
3 ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ 12
3.1 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ 12
3.2 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՃԱՐ 12
3.3 ՕԵԿԵ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ
3.4 ԾԱԽՍԵՐ Error! Bookmark not defined.
3.5 ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐ 13
4 ՄԱՐՈՒՄ
4.1 ՄԱՐՈՒՄ Error! Bookmark not defined.
4.2 ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՈՒՄ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ
4.3 ԱՆՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5 ՎՃԱՐՈՒՄՆԵՐ Error! Bookmark not defined.
5.1 ՎՃԱՐՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
5.2 ՎՃԱՐՄԱՆ ԵՂԱՆԱԿ
5.3 ՎՃԱՐՆԵՐ՝ ԱՁԱՏՎԱԾ ՊԱՀՎՈՂ ՀԱՐԿԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻՑ
5.4 ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՈՒՄ
6 ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՊԱՅԱՆՆԵՐ
7 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐ Error! Bookmark not defined.
7.1 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔԵՐ
7.2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ Error! Bookmark not defined.
8 ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՈՒՄ
8.1 ԵՐԱՇԽԻՔՆԵՐ Error! Bookmark not defined.
8.2 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՈՒՄ
9 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆԸ ՀՐԱԺԱՐՈՒՄ	

10	ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ	
10.1	ՕԵԿՅ ԵՐԱՇԽԻՔԸ	
10.2	ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ	
10.3	ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐ	
10.4	ՀՐԱԺԱՐՈՒՄ, ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ	
10.5	ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ	Error! Bookmark not defined.
10.6	ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ	
10.7	ՆՇԱՆԱԿՈՒՄ	
10.8	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ	

ՀԱՎԵԼՎԱԾ 1 - ՎՃԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ		26
.....		
ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ		27
.....		
ՀԱՎԵԼՎԱԾ 3 - ԾՐԱԳՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎԸ ..		30
ՀԱՎԵԼՎԱԾ 4 - ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՁԵՎԸ		31
[ՀԱՎԵԼՎԱԾ 5 - Առկա երաշխիքային տոկոս - եթե առկա է]		32

ՆԱԽԱԲԱՆ

ՔԱՆԻ ՈՐ,

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս Մշակույթի նախարարի (այսուհետ՝ Ծրագրի Գնորդ) և Կոնսորցիումի, որը բաղկացած է «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս ԷյՋի» («Waagner-Biro Austria Stage Systems AG»), Վիեննա, «Ջալցբրեններ Ստեյջտեքթ ատուդիո վիդեո մեդիանսիսթեմս Ջիէմբիէյջ» («SALZBRENNER STAGETEC Audio Video Mediensystems GmbH»), Բուբենհայմ, Գերմանիա, «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Ջիէմբիէյջ» («Electronic Theatre Controls GmbH»), Գերմանիա և «Արթսթեք» (Artstech) ՍՊԸ, Երևան, Հայաստան, որպես Կոնսորցիում անդամ-ընկերությունների միջև, -----2014թ-ին կնքվել է տեխնիկական և դրա հետ կապված ծառայությունների մատակարարման պայմանագիր՝ «Արամ Խաչատուրյանի անվան ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի վերագինման համար, Ծրագրի Գնորդի առանձնահատկություններին համապատասխան, Երևանում, 2.000.000/երկու միլիոն/ Եվրո գումարի չափով:

Փոխատուն համաձայնել է ֆինանսավորել Ծրագրի մի մասը՝ սույն Համաձայնագրի ժամկետներին և պայմաններին համապատասխան:

Ըստ սույն Համաձայնագրում ներառված պարտավորությունների, Փոխառուն գործում է որպես հիմնական և առաջնային պարտապան Փոխատուի հանդեպ, և ոչ որպես գործակալ:

Սույն Համաձայնագիրը և Ծրագրի Մատակարարման Պայմանագիրը առանձին և միմյանցից անկախ համաձայնագրեր են: Ծրագրի արտահանողի կամ Ծրագրի Գնորդի կողմից Ծրագրի Մատակարարման Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարումը չի կարող որևէ ազդեցություն ունենալ Փոխատուի հանդեպ Փոխառուի ունեցած պարտավորությունների վրա, ինչպես նաև՝ Փոխատուն որևէ պատասխանատվություն չի կրում Նախագծի արտահանողի կամ Նախագծի Գնորդի՝ պարտավորությունների չկատարման համար:

ԱՅՍՊԻՍՈՎ, ՍՈՒՅՆՈՎ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ հետևյալի մասին՝

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Համաձայնագրում և նրան կից Հավելվածներում հետևյալ արտահայտությունները կունենան հետևյալ նշանակությունը՝

- “Վարկային գծի նախնական Համաձայնագիր” նշանակում է 300.000.00 Եվրո գումարի չափով Համաձայնագիր՝ Ծրագրի Մատակարարման Պայմանագրով սահմանված 15% կանխավճարի ֆինանսավորման համար
- “Համաձայնագիր” Նշանակում է Արտահանման Վարկային Համաձայնագիր
- “Հավելված” Նշանակում է սույն Համաձայնագրին կցված փաստաթուղթ, որի պայմանները համարվում են սույն Համաձայնագրից բխող և նրա անբաժանելի մասը

“Հողված”	Նշանակում է սույն Համաձայնագրի հողվածը
“Հասանելի ժամկետ”	Նշանակում է այն ժամանակահատվածը, որը սկսում է Ուժի մեջ մտնելու Օրը և ավարտվում Ուժի մեջ մտնելու Օրվա ավարտից 1) ամենաուշը 3/երեք/ ամիս հետո և 2) 2014թ-ի նոյեմբերի 30-ին
“Փոխառու”	Նշանակում է Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Ֆինանսների նախարարության, Մելիք-Ադամյան 1, Երևան, Հայաստանի Հանրապետություն
“Փոխառություն”	Նշանակում է տրամադրվող կամ տրամադրման ենթակա Վարկային Գծի մասնաբաժինը
Աշխատանքային օր	Նշանակում է օր (բացի շաբաթ և կիրակի օրերից), երբ Վիենայում բանկերը բաց են ընդհանուր ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար, և որը նաև համարվում է TARGET օր: Կասկածներից զերծ մնալու համար սույն Համաձայնագրում օգտագործվում է “օրեր” հասկացությունը, որը նշանակում է օրացույցային օրեր:
Պարտավորության Վճար	Նշանակում է հողված 3.1-ում նշված վճարը
Նախադեպային Պայմաններ	Նշանակում է հողված 6-ում նշված պայմանները
Կոնսորցիումի Ղեկավար	Նշանակում է Վազներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս ԷյՋի, Վիեննա, Ավստրիա
Վարկային Գիծ	Նշանակում է հողված 1.1-ով սահմանված վարկային գիծը
Ուժի մեջ մտնելու Օր	Նշանակում է հողված 6-ում սահմանված օրը
“Եվրո”	Եվրամիության անդամ պետությունների միասնական արժույթը, որոնք Եվրոն ընդունում են որպես իրենց արժույթ՝ համաձայն ԵՄԱ օրենսդրության
EURIBOR	Նշանակում է, Վարկի հետ կապված Ա. ՕեԿԵ-ի կողմից համապատասխան Տոկոսային ժամանակաշրջանի ավարտից 2/երկու/ աշխատանքային օր առաջ՝ հաջորդ Տոկոսային ժամանակաշրջանի համար ընտրված տոկոսադրույք՝ հղում կատարելով EURIBOR տոկոսադրույքների համար նախատեսված էլեկտրոնային տեղեկատվական սպասարկման կայքին (Reuters էջ “EURIBOR01”, Telerate կամ Bloomberg), կամ Բ. (եթե Փոխառության Տոկոսի

		<p>ժամանակաշրջանի համար որևէ տոկոսադրույք հասանելի չէ) OeKB-ի կողմից պահանջվող առաջարկների միջին թվաբանականը երեք ամսվա դեպոզիտի համար երեք առաջատար վարկային հաստատություններից եվրոգոտու միջբանկային շուկաներում տոկոսի ժամանակահատվածի վերջնաժամկետից 2 աշխատանքային օր առաջ հետևյալ Տոկոսային ժամանակահատվածի համար: Այն դեպքում, երբ սույն սահմանումը նույնպես չի կատարվում, վերջին կիրառված EURIBOR-ը գործում է հաջորդ Տոկոսային ժամանակահատվածի համար:</p>
“Պարտավորությունների չկատարում”		<p>Նշանակում է ցանկացած իրադարձություն կամ պատճառ, որոնք որպես այդպիսին սահմանված են հոդված 7.1-ում</p>
“Ապահավվող գրավ”		<p>Նշանակում է Հավելված 5-ում սահմանված Ապահովվող գրավ</p>
Վարկային հաշիվ		<p>Նշանակում է Վարկառուի անունով բացված հաշիվ՝ հոդված 1.2.-ի պայմաններին համապատասխան</p>
“Ուժի մեջ մտնելու վերջին օր”		<p>Նշանակում է հոդված 6-ում սահմանված Օրը</p>
Հանձնման արձանագրություն		<p>Նշանակում է Ծրագրի Գնորդի և Ծրագրի Արտահանողի կողմից ստորագրված արձանագրություն, որով հաստատվում է Մատակարարման Ծրագրի Պայմանագրով սահմանված Օբյեկտի հանձնումը, կամ միայն Ծրագրի Արտահանողի կողմից ստորագրված արձանագրություն, որն ուղեկցվում է Ծրագրի Արտահանողի Մատակարարման Ծրագրի Պայմանագրով նախատեսված ապրանքների հանձնման պատրաստակամության մասին՝ Ծրագրի Արտահանողի կողմից ստորագրված ծանուցմամբ</p>
“Տոկոսների ամսաթվեր”	վճարման	<p>Նշանակում է յուրաքանչյուր տարի հունիսի 30—ը և դեկտեմբերի 31-ը: Եթե այդ օրը աշխատանքային օր չէ, ապա վճարումն իրականացվում է դրան հաջորդող աշխատանքային օրը</p>
Տոկոսների ժամանակաշրջան Փոխառու		<p>Նշանակում է Հոդված 2.2-ում սահմանված օրը</p> <p>Նշանակում է Էրստե բանկ der oesterreichischen Sparkassen AG, Գրաբեն 21. 1010, Վիեննա, Ավստրիա, գրանցված Վիեննայի կոմերցիոն դատարանի կողմից, գրանցման համար՝ թիվ</p>

286283 \$.

“Վարկ”	Նշանակում է սույնով տրամադրվող և դեռևս չմարված Փոխառությունների համախառն հիմնական գումարը
“Կառավարման վճար”	Նշանակում է հոդված 3.2-ում սահմանված վճար
“Մարժա”	Նշանակում է տարեկան 0.1 % (զրո կետ մեկ տոկոս)
“Էական ազդեցություն”	բացասական Նշանակում է հղում մի բանի, որը Փոխատուի հիմնավորված կարծիքով կարող է էական բացասական ազդեցություն ունենալ ա) Փոխառուի ֆինանսական վիճակի և հեռանկարների վրա, կամ բ) կարող է խոչընդոտել սույն Համաձայնագրով կամ Նախնական Վարկային Համաձայնագրով սահմանված Փոխառուի պարտավորությունների կատարմանը՝ ինչպես և երբ նման պարտավորությունները նվազում են, կամ գ) Փոխատուի կողմից սույն Համաձայնագրով կամ Նախնական Վարկային Համաձայնագրով սահմանված ցանկացած իրավունքների իրականացման վրա
“OeKB”	Ավստրիական էքսպորտային վարկային գործակալություն հանդիսացող (Oesterreiche Kontrollbank Aktiengesellschaft (Ավստրիական Կոնտրոլբանկ բաժնետիրական ընկերություն) ԱՄՀօՖ 4, Ա-1011, Վիեննա, Ավստրիա
OeKB Բազային դրույք	Նշանակում է՝ ա) սկզբնական Տոկոսի վճարման ժամանակահատված, EURIBOR՝ առաջին փոխառությունից երու Աշխատանքային օր առաջ OeKB-ի կողմից սահմանված ընդմիջարկված և կլորացված դեպի մեկ տոկոսի մեկ ութերորդը (1/8 %) կազմող անբաժանելի բազմապատիկը: Այն դեպքում, եթե սկսված Տոկոսի վճարման ժամանակաշրջանը մեկ շաբաթից պակաս է, կգանձվի մեկշաբաթյա EURIBOR; բ) մնացած բոլոր Տոկոսի վճարման ժամանակաշրջաններում վեցամսյա EURIBOR՝ առաջին փոխառությունից երու Աշխատանքային օր առաջ OeKB-ի կողմից սահմանված ընդմիջարկված և կլորացված դեպի մեկ տոկոսի մեկ ութերորդը (1/8 %) կազմող անբաժանելի բազմապատիկը:
OeKB Երաշխիք	Նշանակում է OeKB-ի կողմից սույն Համաձայնագրին համապատասխան և ի դեմս

	<p>Ավստրիայի Հանրապետության և 1981թ-ի Արտահանման խթանման Ակտի (փոփոխված) համաձայն թողարկված կամ թողարկման ենթակա արտահանման երաշխիք</p>
ՕեԿԵ Վերաֆինանսավորման Համաձայնագիր	<p>Նշանակում է սույն Համաձայնագրի առնչությամբ ՕեԿԵ-ի և Փոխատուի միջև կնքված վերաֆինանսավորման համաձայնագիր</p>
ՕեԿԵ հավելավճար	<p>Նշանակում է ՕեԿԵ-ի կողմից վարկային ժամանակաշրջանի համար սահմանված, 8-12 տարի ժամկետով հավելավճար, որը հրապարակվում է ՕեԿԵ-ի www.oekb.at կայք էջում և գործում է Փոխատուի կողմից ՕեԿԵ-ի Հավելավճարի Համաձայնագրի դիմում ներկայացնելու ժամանակ, պայմանով, որ ՕեԿԵ-ի Երաշխիքը գործում է դիմումը ներկայացնելու պահին: Սույն հավելավճարը մնում է անփոփոխ՝ Համաձայնագրի գործողության ողջ ընթացքում</p>
Վճարման Գործընթաց	<p>Նշանակում է Հավելված 1-ում նշված փոխառությունների վճարման կարգը</p>
Ծրագիր	<p>Նշանակում է տեխնիկայի և հարակից ծառայությունների մատակարարում՝ Արամ Խաչատրյան ֆիլիարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ-ի վերանորոգման համար՝ ըստ Ծրագրի Գնորդի կողմից սահմանված բնութագրի (Երևան)</p>
Ծրագրի Գնորդ	<p>Նշանակում է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Կառավարական 3 շենք, Հանրապետության Հրապարակ, Երևան, Հայաստան</p>
Ծրագրի մատակարարման պայմանագիր	<p>Նշանակում է պայմանագրի տեխնիկայի և հարակից ծառայությունների մատակարարման համար Արամ Խաչատրյան ֆիլիարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ-ի վերագինման նպատակով ըստ Ծրագրի Գնորդի կողմից սահմանված բնութագրի (Երևան), 2.000.000.00 /երկու միլիոն/ Եվրո գումարի չափով, կնքված Ծրագրի Գնորդի և Ծրագրի արտահանողի միջև՝ -----թ-ին, որոնք վերաբերում են Ծրագրին և դրանում հետագայում արված ցանկացած փոփոխության, եթե կան այդպիսիք</p>
Ծրագրի արտահանող	<p>Նշանակում է «Վագներ-Բիրո Աուստրիա ստեյջ սիսթեմս ԷյՋի» («Wagner-Biro Austria Stage Systems AG»), Լեոնարդ Բերնշտայն շտրասսե 10. 1220</p>

	<p>Վիեննա, Ավստրիա, «Չալցբրեններ Ստեյջերեք աուդիո վիդեո մեդիասիսթեմս Զիլեմբիլջ» («SALZBRENNER STAGETEC Audio Video Mediensystems GmbH»), 96155 Բուրենհայմ, Գերմանիա, «Էլեկտրոնիկ Թիեթր քոնթրոլս Զիլեմբիլջ» («Electronic Theatre Controls GmbH»), Օհնշտրասսե 3. 83607 Հոլտսկիրշեն, Գերմանիա և «Արթսթեք» (Artstech) ՍՊԸ, Ղազար Փարպեցի 15, գրասենյակ 4, Երևան, 0002, Հայաստան</p>
Ծրագրի գնի տոկոսադրույք	<p>Նշանակում է գնի մինչև 85% (ութսունհինգ տոկոս)՝ ըստ ծրագրի արտահանողի հետ, Ծրագրի մատակարարման պայմանագրին համապատասխան</p>
Ապահովագրված տոկոսադրույք	<p>Նշանակում է գրավադրում, գույքի վրա կալանք դնելը, անվճար, հանձնարարականով կամ փոխանցումով՝ ապահովագրման նպատակով, հիփոթեքավորում, տիտղոսի կամ այլ ապահովագրված տոկոսադրույքի պահպանում, որն ապահովում է ցանկացած անձի ցանկացած պարտականություն կամ ցանկացած այլ համաձայնություն, նախապատվության իրավունք կամ պայմանավորվածություն, որն ունի համանման ազդեցություն</p>
Ստորագրման Օր	<p>Նշանակում է այն օրը, երբ Համաձայնագիրը ստորագրվել է Փոխառուի և Փոխատուի կողմից</p>
Մեկնարկման Օր	<p>Նշանակում է Ծրագրի համար Հանձնման արձանագրության օրը</p>
TARGET 2	<p>Նշանակում է Trans-European Automated Real-time Gross Settlement Express Transfer վճարման համակարգ, որը կիրառում է միասնական օգտագործման պլատֆորմ և գործարկվել է 2007թ.-ի Նոյեմբերի 19-ին</p>
TARGET Օր	<p>Նշանակում է ցանկացած օր, երբ TARGET 2-ը պատրաստ է Եվրոյով վճարումներ կատարելու համար</p>
Հարկ/Հարկեր	<p>Նշանակում է ցանկացած ներկա և հետագա հարկ, զանձում, պարտավորություն, դրոշմատուրք, վճարում, նվազեցում կամ պահում կամ նման այլ պահումներ (ներառյալ, բայց չսահմանափակվելով ցանկացած տույժեր կամ տոկոսներ, որոնք զանձվում են կապված ցանկացած վճարման հետաձգման կամ ժամկետանց վճարման համար) և «հարկերը» և «հարկադրումը» պետք է մեկնաբանվեն համապատասխանաբար</p>

1. ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ

1.1 Վարկային գիծ

Սույնով Փոխատու համաձայնում է Փոխառուին տրամադրել մինչև 1.700.000.00 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) գումարի չափով Վարկային Գիծ, որը կազմում է Ծրագրի Մատակարարման Պայմանագրով սահմանված գնի 85%-ը, սույն Պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետում, պայմանով, որ՝

1. Փոխառությունը կապված ա) վերը նշվածի հետ, կհատկացվի ուղղակիորեն Ծրագրի Մատակարարման Կոնսորցիումի Ղեկավարին, Հավելված 1-ում հստակեցված վճարման Գործընթացին համապատասխան, կիրականացվի Աշխատանքային Օրը՝ Ուժի մեջ մտնելու Օրվա հետ միասին և կիրականացվի Ծրագրի Գնորդի կողմից, Ծրագրի մատակարարման պայմանագրով Ծրագրի արտահանողին, Ծրագրի գնի տոկոսին համարժեք: Այնուամենայնիվ, Փոխատուն պարտավորված չէ վերահսկել կամ ստուգել Փոխառության գումարի օգտագործումը: Փոխատուի կողմից Ծրագրի Արտահանողին ցանկացած հատկացում կհամարվի փոխառություն և Փոխատուին պարտավորեցնում է ավտոմատ կերպով գանձել Վարկային հաշվից՝ համապատասխան գումարի չափով:

2. Չի կարող իրականացվել այնպիսի Փոխառություն, որի գումարը մեկ այլ ցանկացած արդեն իսկ կատարված կամ պահանջված Փոխառության հետ միասին գերազանցում է Վարկային Գծի գումարը, կամ վերը նշված ա) ենթակետով սահմանված բաշխման ենթակա գումարի հետ կապված Ծրագրի Արժեքի Տոկոսադրույքը; և Փոխառությունների համախառն գումարները չպետք է գերազանցեն ոչ Վարկային գծի, ոչ էլ վերը նշված ա) ենթակետով սահմանված բաշխման ենթակա գումարի չափը:

3. Փոխառության որևէ մասնաբաժին չի կարող պահանջվել Ծրագրի Գնորդի կողմից Ծրագրի մատակարարման պայմանագրով Ծրագրի արտահանողին ցանկացած կանխավճար կատարելու համար:

4. Ոչ մի Փոխառություն չի կարող իրականացվել նախքան նախնական պայմանների բավարարումը, և

5. Փոխատուն չի իրականացնի որևէ վճարում՝ Վարկային գծի գործողության ժամկետի ավարտից հետո:

Փոխատուի՝ հատկացում կատարելու պարտականությունը ենթակա է հետագա պայմաններին առ այն, որ Սույն Համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված պատշաճ ստորագրված վճարման հանձնարարագիրը Փոխատուն ստացել է և այդ ժամանակ հատկացումը կատարվել է՝

Ա. Սույն Համաձայնագրում պարունակվող ներկայացուցչությունները և երաշխավորությունները պետք է լինեն իրական և ճիշտ՝ բոլոր էական առումներով և այն նույն ազդեցությամբ ինչպես, որ նման ներկայացուցչությունները և երաշխավորությունները կազմվել են հատկացման նման պահանջ ստանալու կամ նման հատկացում կատարելու օրը, և

Բ. Ոչ մի իրադարձություն կամ հանգամանք, որը բաղկացած է կամ կապված է ծանուցման տրման կամ ժամկետի խախտման կամ երկուսի հետ միասին, կկազմի Պարտականության չկատարման դեպք, որը տեղի է ունեցել և շարունակվում է կամ հանդիսանում է նման վճարման արդյունք:

1.2 Վարկային հաշիվ

Փոխատուն պետք է Փոխառուի անունով բացի Եվրոյով Վարկային հաշիվ, որպես՝ «Արամ Իսախանյանի ֆիլիարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ-ի վերագինման-Արտահանման Վարկային Հաշիվ»

Սույնով սահմանված կարգով ցանկացած Փոխառություն պետք է հաշվեգրվի Վարկային Հաշվի վրա, Փոխատուի կողմից գնահատվի նման Փոխառության վճարման օրը և այդ մասին Փոխատուն պետք է իրազեկի Փոխառուին՝ էլ-նամակի միջոցով:

2 ՏՈԿՈՍ

2.1. Տոկոսի վճարում և հաշվարկ

Փոխառուն պետք է Փոխառության տոկոսներ վճարի ժամանակահատվածի վերջում՝ Տոկոսների վճարման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար՝ ընդհանուր գումարի պարտավորության մասով՝

- (i) ՕեԿԵ Բազային Տոկոսադրույք;
- (ii) ՕեԿԵ Հավելավճար;
- (iii) Մարժա, և
- (iv) Պարտադիր վճար, եթե այդպիսին կա:

Փոխատուն պարտավոր է Տոկոսների վճարման առաջին ժամանակահատվածը սկսելուց առաջ և առաջին և յուրաքանչյուր հաջորդ Տոկոսի վճարման ժամանակահատվածի ավարտից հետո, էլ-նամակի միջոցով ծանուցել Փոխառուին Հաջորդ տոկոսի վճարման ժամկետի տոկոսադրույքի վերաբերյալ.

2.2. Տոկոսների հաշվարկ և վճարման ամսաթիվ

Ա. Փոխառության տոկոսների վճարման ժամանակահատվածները պետք է սահմանվեն 6 (վեց) ամիս, բացառությամբ՝ Տոկոսների նախնական ժամանակահատվածի, որը կսկսվի առաջին Փոխառության օրը և կավարտվի ցանկացած դեպքում, հաջորդ տոկոսի վճարման ամսաթվին: Յուրաքանչյուր հաջորդող տոկոսների ժամանակահատվածը կսկսվի նախորդ տոկոսների ժամանակահատվածը լրանալուց հետո՝

Ա. Սույնով սահմանված ցանկացած տոկոս օրեցօր կավելանա, կհաշվարկվի տարվա մեջ 360 օրվա ընթացքում անցած թվերի փաստացի քանակով, և, բացառությամբ հոդված 5.1-ով սահմանված կարգի, կվճարվի Փոխառուի կողմից Փոխատուին, կիսամյակային կտրվածքով, ընդհանուր գումարի պարտավորության մասով, Տոկոսների Վճարման ամսաթվին:

2.3. Տուգանքի Տոկոսներ

Փոխառուի կողմից սույնով սահմանված ժամկետում ցանկացած գումարի չափով վճարում կատարելու պարտավորությունը խախտելու դեպքում, Փոխառուն կվճարի այդ գումարի չափով տոկոսներ՝ խախտումը կատարելու օրվանից մինչև փաստացի վճարման օրը, այդ ժամանակ առկա ՕեԿԵԲ բազային դրույքաչափի և ՕեԿԵԲ հավելավճարին, գումարած Մարժայի գումարի չափին ավելացված տարեկան 2% (երկու տոկոս): Այն դեպքում, երբ ՕեԿԵԲ-ից վերաֆինանսավորում չի իրականացվում, պահանջվող բազային դրույքաչափը որոշվում է փոխառուի կողմից և պետք է լինի այն փոխարժեքով, որով Ավստրիայի առաջնակարգ բանկերը համապատասխան ժամկետում կարող են իրենք վերաֆինանսավորել Եվրոպական Միության միջբանկային դրամային շուկայում՝ 30 (երեսուն) օրյա ժամկետում (կամ ավելի կարճ կամ երկար ժամկետներում, որը Փոխառուն կարող է ընտրել իր հայեցողությամբ), նման բազային տոկոսադրույքը կարող է աճել ՕեԿԵԲ հավելավճարին գումարած Մարժայի և տուգանքների տոկոսի մարժայի գումարը:

3. ՎՃԱՐՆԵՐ և ԾԱԽՍԵՐ

Սույն՝ 3-րդ հոդվածով սահմանված Փոխառուի պարտավորությունները ամբողջությամբ կմնան ուժի մեջ և կգործեն՝ անկախ փոխառության գումարի փաստացի վճարման փաստից և կգործի ցանկացած վաղաժամկետ մարման, դադարեցման կամ սույն Համաձայնագրի լուծման դեպքում:

3.1. Պարտավորության համար վճար

Փոխառուն պարտավորվում է Կնքման Օրվանից սկսած մինչև Հասանելի ժամանակահատվածի ավարտը Փոխառուին վճարել Պարտավորության համար վճար (<Պարտավորության համար վճար>) տարեկան 0.3%-ի (զրո ամբողջ երեք տասնորդական) չափով:

Պարտավորության համար վճարը պետք է հաշվարկվի՝ հիմնվելով յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի սկզբում և փաստացի օրերի քանակի ավարտին /տարին 360 օր/ չօգտագործված Վարկային Գծի վրա, և պետք է վճարվի եռամսյակային կտրվածքով Փոխառուի կողմից Տոկոսների Վճարման ժամկետի ավարտից հետո: Սույն Պայմանագրով Պարտավորության համար վճարի առաջին վճարումը պետք է կատարվի ստորագրման ամսաթվին հաջորդող Տոկոսների Վճարման օրը:

3.2. Կառավարման վճար

Փոխառուն պարտավորվում է Կնքման օրվանից հետո 10 /տասը/ օրվա ընթացքում վճարել Փոխառուին կառավարման վճար /<Կառավարման վճար> 20,000.00 Եվրո գումարի չափով:

3.3 ՕԵԿԵԲ-ի երաշխիքային վճարները և ծախսերը

Փոխառուն Փոխառուին կփոխհատուցի ՕԵԿԵԲ-ի երաշխիքի հետ կապված Փոխառուի կողմից ՕԵԿԵԲ-ին վճարվելիք բոլոր վճարները և ծախսերը:
Փոխառուն Փոխառուին կվճարի ՕԵԿԵԲ-ի երաշխիքային վճարները՝ ՕԵԿԵԲ-ի հարկմանը համապատասխան:

OEKB-ը OEKB-ի երաշխիքի համար կգանձի տարեկան մոտավորապես 2.199% (երկու ամբողջ հարյուր իննսուն ինը տոկոս) տոկոս հաստատված տոկոսադրույք (“OEKB-ի երաշխիքային վճարներ”) Վարկային գծի գումարի չափով:

OEKB-ի կողմից OEKB-ի երաշխիքային վճարների հաշվարկը կատարվում է Հասանելիության ժամկետի ընթացքում շարունակաբար աճող վարկի և նախատեսվող մարման ժամանակացույցի հիման վրա: Հետագայում OEKB-ի հաշվարկը հիմնված է լրացված օրերի փաստացի թվի (ենթադրվում է, որ յուրաքանչյուր ամիս ունի 30 օր) և 360 օր ունեցող տարվա վրա: OEKB-ի երաշխիքային վճարները կատարվում են կիսամյակային կտրվածքով՝ սկսած սույն Համաձայնագրի (ՏՀՀԿ զրո կետ) ներքո առաջին Փոխառությունից:

OEKB-ի երաշխիքային վճարների կատարման առաջին ամսաթիվը և հստակ տոկոսադրույքը և գումարը կսահմանվեք OeKB-ի կողմից՝ OeKB-ի երաշխիքի ուժի մեջ մտնելուն պես:

Այն դեպքում, եթե նախնական ենթադրված մասհանման ժամկետից և մարման ժամանակացույցից կատարված շեղումը առաջացնում է բարձր ռիսկ (օր.՝ սույնով տրամադրված վարկի ժամկետի երկարաձգում), OeKB-ն կարող է համապատասխանաբար վերահաշվարկել OeKB-ի երաշխիքային վճարները: Փոխառուն կփոխհատուցի Փոխատուիօն նման շեղման հետևանքով առաջացած OeKB-ի երաշխիքի ցանկացած բարձրացման համար:

3.4. Ծախսեր

Փոխառուն կվճարի ցանկացած առկա կամ հետագա դրոշմատուրք կամ գրանցման տուրք կամ այլ համարժեք հարկեր կամ տուրքեր կամ փաստաթղթային Հարկեր կամ ցանկացած այլ ակցիզային կամ գույքային հարկեր, գանձումներ կամ համարժեք վճարներ, եթե այդպիսիք կան, որոնք ծագում են սույն Համաձայնագրով կամ Կանխավճարային Վարկային Համաձայնագրով կատարված ցանկացած վճարումներից, կամ սույն Համաձայնագրին կամ Կանխավճարային Վարկային Համաձայնագրին համապատասխան իրականացումից, մատակարարումից կամ գրանցումից առաջացած վճարներ և ժամանակ առ ժամանակ Փոխատուի պահանջով փոխհատուցի նման Հարկերի կամ տուրքերի վճարման կամ վճարման ժամկետի խախտումից առաջացած պարտավորությունների, ծախսերի և պահանջների համար:

Փոխառուն Փոխատուի պահանջով նրան կվճարի բոլոր գումարները և ծախսերը (ներառյալ, բայց չսահմանափակվելով օրինական վճարները և ճանապարհային ծախսերը), որոնք կրել է Փոխատուն՝ 1. սույն Համաձայնագրի և Կանխավճարային Վարկային Համաձայնագրի բանակցությունների, նախապատրաստման և ավարտման համար, սահմանափակվելով մինչև 12.000 Եվրո գումարի չափով, 2. սույն Համաձայնագրով և Կանխավճարային Վարկային Համաձայնագրով իր իրավունքների պահպանման, պաշտպանության և կիրարկման համար, և 3. Փոխառուի կողմից կամ ի դեմս նրա պահանջված իրավունքների ցանկացած փոփոխության, հրաժարումի, համաձայնության կամ կասեցման հետ կապված:

3.5. Լրացուցիչ ծախսեր

Փոխառուն Փոխատուի պահանջով պետք է անհապաղ վճարի Փոխատուին Փոխատուի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից կատարված ցանկացած Լրացուցիչ ծախսերի գումարը, որոնք առաջացել են՝ 1. ցանկացած օրենքի, կարգավորման, պահանջի, հրահանգի ցանկացած փոփոխության կամ ընդունման արդյունքում; կամ 2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված ցանկացած օրենքի, կարգավորման, պահանջի կամ հրահանգի համապատասխանեցման արդյունքում, 3. ցանկացած կապիտալի բավարարության պահանջի կամ կենտրոնական բանկի կամ այլ ֆիսկալ, դրամական կամ ֆինանսական կառույցների պահանջները, որոնք սովորաբար կիրառվում են ֆինանսական հաստատությունների և/կամ բանկերի նկատմամբ:

Սույն Համաձայնագրում “Լրացուցիչ Ծախսեր” նշանակում է՝ 1. հավելյալ կամ լրացուցիչ ծախսեր, 2. սույնով նախատեսված վարկի վերադարձման կամ Փոխատուի ընդհանուր կապիտալի դրույքի նվազեցում; կամ 3. սույն Համաձայնագրով նախատեսվող և վճարման ենթակա ցանկացած գումարի նվազեցում, որը գոյացել է Փոխատուի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից այն առումով, որ դա բնորոշ է Փոխատուին, որը ստանձնել է սույն Համաձայնագրով սահմանված պարտականությունը կամ ֆինանսավորել կամ իրականացրել է սույն Համաձայնագրով սահմանված իր պարտականությունները” Փոխառուի կողմից Փոխատուին ներկայացված նման լրացուցիչ ծախսերի վկայագիրը կհամարվի նման Լրացուցիչ ծախսերի վերջնական ապացույց:

Մարում

4.1 Մարում

Սույն Համաձայնագրով տրամադրված Փոխառությունը ենթակա է վերադարձման 20 (քսան) հավասարաչափ հերթական կիսամյակային մարումներով, առաջին մարումը պետք է իրականացվի Մեկնարկման օրից վեց ամիս հետո, սակայն առնվազն Համաձայնագրի Ուժի մեջ մտնելու ամսաթվից 18 ամիս հետո: Փոխատուն Փոխառուին տրամադրում է մարման ժամանակացույց, որտեղ սահմանվում են մարման ամսաթվերը՝ համաձայն սույն Համաձայնագրի պայմաններին: Եթե մարման ամսաթվը Ոչ աշխատանքային օր է, ապա վճարումն իրականացվում է հաջորդ Աշխատանքային օրը:

4.2. Կանխավճար և դադարեցում

Հիմք ընդունելով Փոխատուի և ՕեԿԵ –ի նախորդ անվերապահ համաձայնությունը, որի համար Փոխատուն Փոխառուի պահանջով կարող է դիմել, Փոխառուն կարող է կատարել կանխավճար՝ փոխառության ամբողջ գումարի կամ դրա մի ամսին չափով (նվազագույնը 100.000 Եվրոյի կամ նրա բազմապատիկի չափով) առնվազն 30 (երեսուն) օր առաջ Փոխատուին գրավոր ծանուցելով պահանջվող կանխավճարի մասին (նման ծանուցումը վերջնական է): Փոխատուն կխորհրդակցի ՕեԿԵ-ի հետ ցանկացած ընդհատված ծախսերի մասին, որոնք կարող են ի հայտ գալ և կծանուցի Փոխառուին այդ մասին: Փոխառուն պարտավորվում է Փոխատուի պահանջով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Փոխատուին վճարել ընտանալված ծախսերը, որոնք վերաբերում են Փոխառությանը ամբողջությամբ կամ նրա մի մասին և ենթակա են վճարման Փոխառուի կողմից՝ նման պահանջի դեպքում:

Ցանկացած նման կանխավճար, որը կատարվել է Հասանելիության ժամանակահատվածի ընթացքում, նվազեցնում է վարկային գծի գումարը կանխավճարի չափով և վարկային Գծի հղումները հետագայում կհամարվեն հղումներ որպես այդպիսին նվազեցված գումարին: Ցանկացած նման կանխավճար, որը

Յուրաքանչյուր վճարան օրը Փոխառուն վճարում է տվյալ ամսաթվին վճարման ենթակա գումարները Վիեննայում:

Եթե սույնով այլ բան սահմանված չէ և եթե վճարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը:

Փոխառուի կողմից Փոխատուին կատարվող բոլոր վճարումները կատարվում են ազատ փոխարկվող և փոխացվող ԵՎՐՈ-յով:

Փոխառուն սույնով լիազորում է Փոխատուին, եթե սույն Պայմանագրով սահմանված կարգով վճարումը չի կատարվում, Փոխատուի հետ Փոխառուի ցանկացած կամ բոլոր հաշիվներից գանձել վճարման ենթակա գումարներ: Եթե նման հաշիվները անհրաժեշտ փոխարժեքով չեն, Փոխատուն իրավասու է գանձել գումարը ցանկացած փոխարժեքով՝ համարժեք տվյալ փոխարժեքին: Տվյալ փոխարժեքի համարժեքը սահմանվում է Փոխատուի կողմից սովորական գործունեության ընթացքում գործող շուկայական փոխարժեքով:

5.3. Հարկերից և այլ գանձումներից ազատված վճարումներ

Սույն Պայմանագրի շրջանակներում Փոխառուի կողմից կատարված բոլոր վճարումները պետք է հաշվարկվեն և լինեն ամբողջ ծավալով (առանց որևէ պահումների)՝ առանց հաշվնացումների:

Փոխառուն սույնով հրաժարվում է Փոխատուին վճարման ենթական որևէ գումարները պահումների կատարելու իր իրավունքից և համաձայնում է, որ ցանկացած պատճառով չի կատարի պահում վճարման ենթակա գումարներից: Մասնավորապես, Փոխառուն պահումներ չի կատարում Փոխատուին վճարման ենթական գումարները այն հիմքով, որ նա կամ Ծրագրի Գնորդը ունեն կամ կարող են ունենալ որևէ առարկություն, գործողության իրավունք, իրավասություն կամ պահանջ Ծրագրի Արտահանողի կամ այլ մատակարարների հանդեպ՝ կապված Ծրագրի կամ Ծրագրի հրականացման Պայմանագրի հետ:

Փոխատուն կարող է հաշվանցել Փոխառուի կողմից սույն Պայմանագրով ստանձնած վճարման ենթակա պարտավորություն ընդդեմ Փոխատուի կողմից ստանձնած որևէ պարտավորության (կամ ոչ)՝ անկախ պարտավորության վճարման վայրից կամ փոխարժեքից: Եթե պարտավորությունները տարբեր փոխարժեքով են, Փոխատուն հաշվանցման նպատակով կարող է փոխարկել պարտավորությունը սովորական գործունեության ընթացքում գործող շուկայական փոխարժեքով:

Եթե Փոխառուն սույն Պայմանագրի շրջանակներում կատարում է որևէ վճարում, որից պահանջվում է պահել կամ գանձել Հարկեր կամ այլ գումարներ, ապա Փոխառուի կողմից վճարման ենթակա համախառն գումարը պետք է ավելացվի այն չափով, որ պահումներից հետո այն հավասար լինի այն գումարներին, որոնք պետք է ստացվեին, եթե նման պահումներ չպահանջվեին, և Փոխառուն փոխհատուցում է Փոխատուի ցանկացած կորուստներ կամ ծախսեր, որոնք առաջացել են Փոխառուի կողմից նման պահումներ կատարելու հետևանքով:

Փոխառուն (Փոխատուի պահանջը ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում) վճարում է Փոխատուին կորստի, պատասխանատվության կամ ծախսին համարժեք գումարը, որը Փոխառուն սահմանում է, որ կրել է կամ կկրի (ուղղակի կամ անուղղակիորեն) հարկերի հաշվին՝ կապված սույն Պայմանագրի հետ: Սույն պարագրաֆը չպետք է տարածվի այն Հարկերի վրա, որոնք կիրառվում են Փոխատուի նկատմամբ՝ համաձայն Ավստրիայի օրենսդրության, որպես Փոխատուի գտնվելու վայրի օրենսդրություն, կամ, եթե այլ բան է սահմանված այն երկրի օրենսդրությունը, որտեղ Փոխատուն հանդես է գալիս որպես հարկերի գծով ռեզիդենտ, եթե այդ Հարկը

պարտադրված կամ հաշվարկված է Փոխատուի կողմից ստացված կամ ստացման ենթակա զուտ եկամուտի նկատմամբ:

5.4. Վճարումների յուրացում

Փոխատուի կողմից Փոխառուից ստացված բոլոր վճարումները (եթե Փոխատուն տարբերում է կիրառման կարգը) կիրառվում են Փոխատուի կողմից վճարման ենթակա գումարների համար հետևյալ կարգով և Փոխառուն սույնով համաձայնում է վճարումների նման կարգի կիրառմանը (և Փոխատուի ցանկացած փոփոխության)`

գումարներ՝ Հոդված 3.4-ի համաձայն (Ծախսեր);

գումարներ՝ Հոդված 3.2-ի համաձայն (Կառավարման վճար)

գումարներ՝ Հոդված 3.3-ի համաձայն (ՕեԿՅ Երաշխիքային գանձումներ և ծախսեր)

գումարներ՝ Հոդված 3.1-ի համաձայն (Պարտավորության վճար)

գումարներ՝ Հոդված 2.3-ի համաձայն (Պարտավորությունների չկատարման տոկոս)

գումարներ՝ Հոդված 3.5-ի համաձայն (Հավելյալ ծախսեր)

ժամկետանց գումարներ՝ Հոդված 2.1-ի և 2.2-ի համաձայն (Տոկոս)

ժամկետանց գումարներ՝ Հոդված 4.1-ի համաձայն (Փոխհատուցում)

գումարներ՝ Հոդված 2.1-ի և 2.2-ի համաձայն համաձայն (Տոկոս)

գումարներ՝ Հոդված 4.1-ի համաձայն (Փոխհատուցում)

գումարներ՝ Հոդված 4.2-ի համաձայն (Լրացուցիչ կանխավճար)

ցանկացած այլ գումարներ (եթե այդպիսիք կան)

6. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Սույն Համաձայնագիրը չի դառնա անվերապահ, իսկ Վարկային գիծը հասանելի չի լինի յուրաքանչյուր դեպքում մինչև այն ամսաթիվը, երբ Փոխատուն Փոխառուին ծանուցում է հետևյալ պայմանների կատարման մասին.

- (i) Փոխատուն ստացել է հետևյալ փաստաթղթերից բոլորը կամ անգլերեն լեզվով կամ վավերականացված անգլերեն թարգմանությամբ՝ Փոխատուին բավարար ձևով և բովանդակությամբ:
 - a) Սույն Համաձայնագիրն իրականացնող անձանց լիազորված լինելու մասին ապացույց և ստորագրության նմուշները՝ վավերացված Փոխառուի պատշաճ կերպով լիազորված պաշտոնյայի կողմից;
 - b) Իսկականի հետ ճիշտ է Փոխառուի կողմից պատշաճ կերպով լիազորված պաշտոնյայի կողմից վավերացված կրկնօրինակը, որն ապացուցում է սույն Համաձայնագրի հաստատումը;
 - c) Սույն Համաձայնագրին առնչվող ցանկացած ծանուցումներ, հայտարարություններ և հավաստագրեր ստորագրելու լիազորություն ունեցող անձի (անձանց) ստորագրության նմուշը (ները);
 - d) Հավելված 1-ի Վճարման ընթացակարգը և վճարման հանձնարարականին առնչվող ծանուցումները ստորագրելու

b) ՕեԿԵՅ վերաֆինանսավորման համաձայնագիրը Փոխատուին բավարար ձևով և բովանդակությամբ; և

c) Ցանկացած այլ լիազորություններ, որոնք կարող են պահանջվել:

(iii) Փոխատուն պետք է կնքի լրացուցիչ նամակ Ծրագրի արտահանողի հետ Փոխատուին բավարար ձևով և բովանդակությամբ:

Վերոնշյալ բոլոր պայմանները կատարելուն պես, Փոխատուն անմիջապես ծանուցում է Փոխառուին այդ նպատակով: Եթե նման պայմանները իրականացված չեն ամենաուշը մինչև 2014թ. Օգոստոսի 31-ը (Ուժի մեջ մտնելու վերջնական ամսաթիվ), սույն Համաձայնագիրը բացառությամբ սույն Հոդված 3-ի ներքո Փոխառուի պարտավորությունները դադարում են պարտադիր լինելուց կողմերի համար:

7. ԶԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (դեֆոլտ)

7.1 Դեֆոլտի դեպքեր

Յուրաքանչյուր հետևյալ իրադարձությունները կամ հանգամանքները համարվում են Դեֆոլտ (անկախ այն բանից, թե առաջացման ցանկացած իրադարձություն կամ հանգամանք դուրս է Փոխառուի վերահսկողությունից): Փոխառուն և փոխատուն համաձայնում են, որ յուրաքանչյուր դեֆոլտ օբյեկտիվորեն արդարացված է § 990 ABGB – ի համաձայն:

(ա) Փոխառուն չի վճարել ցանկացած գումար ճիշտ ամսաթվին, վայրում և արժույթով սույն Համաձայնագրի կամ Կանխավճարային Վարկային Ծրագրի Համաձայնագրի համաձայն, որի հիման վրա այն պետք է վճարվեր:

(բ) Փոխառուն չի իրականացրել, կամ պահպանել որևէ այլ պարտավորություն սույն Համաձայնագրի կամ Կանխավճարային Վարկային Ծրագրի իր մասով, որը ի վիճակի չէ հատուցել, կամ եթե փոխատուի կարծիքով այն հնարավոր է ուղղել, սակայն չի ուղղվել ավելի շուտ քանի 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում, երբ փոխատուն ծանուցել է այդ մասին Փոխառուին, և Փոխառուն արդեն իսկ տեղյակ էր իր պարտավորությունների չկատարման վերաբերյալ:

(գ) Վարկառուն չի վճարել որևէ պարտք ըստ համաձայնագրի, որի հիման վրա վերջինս պարտավորված է վճարել գումար, կամ ցանկացած տոկոսներ, կամ հավելավճար, (ըստ նախատեսված մարման ժամկետի, պահանջվող կանխավճարի, արագացված գործընթացի, պահանջարկի, կամ այլ կերպ), երբ նման ծախողումը շարունակվում է արտոնյալ կիրառելի լինել արտոնյալ ժամկետից հետո (եթե այդպիսիք կան), պայմանագրում նշված նմանատիպ պարտքը կամ որևէ ցանկացած այլ դեպքում, որը տեղի է ունենում և շարունակվում է կիրառելի արտոնյալ ժամկետից հետո (եթե այդպիսիք կան), պայմանագրում նշված, եթե նման դեֆոլտի հետևանքը պետք է արագացնել, կամ թույլ տալ արագացնել, այդ պարտքի մարման ժամկետը կամ այլ նման պարտքերը հայտարարվում են վճարման ենթակա կամ դառնում են վճարման ենթակա, կամ պարտադիր պետք է նախորդ վճարվի (բացի նախատեսված պարբերաբար կանխավճարի), նախքան նշված մարման ժամկետի պահը, կամ քայլեր են ձեռնարկվում կիրառել ցանկացած անվտանգության միջոցառումներ կամ, եթե Փոխառուի որևէ

Ֆինանսական պարտքի պարտավորություն չեղյալ է համարվել կամ կասեցվել է Փոխառուի պարտատիրոջ կողմից:

(դ) Ցանկացած նկարագիր, երաշխիք կամ հայտարարություն, կատարվել կամ համարվում է կատարված կապված սույն Համաձայնագրի կամ Կանխավճարային Վարկային Ծրագրի Համաձայնագրի հետ, կամ որևէ այլ փաստաթուղթ, որը ներկայացվել է Փոխառուի կողմից կամ նրա անունից սույն Համաձայնագրի կամ կանխավճարային Վարկային Ծրագրի Համաձայնագրի հետ կապված կամ հիման վրա ապացուցվում է, որ այն չի համապատասխանում իրականությանը, սխալ է կամ ապա կողմնորոշում է նյութական առումով, երբ կատարվում կամ համարվում է կատարված կամ չի կարող երկարաձգվել դրույթների համաձայն կամ ցանկացած առումով:

(ե) Ցանկացած արտոնություն, համաձայնություն գրանցում կամ հաստատում (կառավարական կամ այլ) պահանջվում է Փոխառուի կողմից կամ պահանջվում է սույն Համաձայնագրի վավերականության, կատարման կամ օրինականության համար, Կանխավճարային Վարկային Ծրագրի Համաձայնագիրը, Վարկային համաձայնագիրը, ՕեԿԵԿ -ի երաշխիքը, ՕեԿԵԿ -ի ֆինանսավորման համաձայնագիրը, Ծրագրի մատակարարման Համաձայնագիրը, Ծրագիրը կամ ծրագրի կատարումը այդ պահից դադարեցվում է կամփոխվում է այնպես, որ կործանարար ազդեցություն է պարտատիրոջ համար կամ դադարում է ցանկացած պատճառով լիովին և իր հետևանքներով, կամ Փոխառուն չի կարողանում կատարել նման որևէ արտոնություն, համաձայնություն, գրանցում կամ հաստատում:

(զ) Փոխառուն չի կարողանում, կամ ընդունում է իր անկարողությունը վճարել պարտքերը, դրանց բացակայության փաստացի կամ ակնկալվող ֆինանսական դժվարությունների պատճառով, կասեցնում է իր պարտքերի վճարումները սկսում է բանակցություններ մեկ կամ ավելի պարտատերերի հետ նպատակ ունենալով վերաձևակերպել իր պարտքը, կամ պարտատերերի հետ բանակցություններ է վարում, համագործակցության կասեցման կամ այլ վարույթի կասեցման պայմանավորվածություն է կիրառում կամ քննարկում:

(է) առկա է Փոխառուի ֆինանսական վիճակի փոփոխություն ստորագրման ամսաթվից հետո և նման փոփոխությունը կարող է ունենալ էական բացասական ազդեցություն փոխատուի հիմնավոր կարծիքով:

(ը) ցանկացած ժամանակ, երբ Փոխառուի համար դառնում է անօրինական իրականացնել կամ կատարել ցանկացած կամ բոլոր իր պարտավորությունները սույն Համաձայնագրի կամ Կանխավճարային Վարկային Ծրագրի Համաձայնագրի շրջանակներում, կամ որևէ Փոխառուի պարտավորություն սույն Համաձայնագրի կամ Կանխավճարային Վարկային Ծրագրի Համաձայնագրի ներքո դադարում է լինել իրավական, վավեր և պարտադիր:

(թ) Վարկառուն հրաժարվում է սույն Համաձայնագրից կամ Կանխավճարային Վարկային Ծրագրից կամ կատարում է ցանկացած գործողություն, որը վկայում է սույն Համաձայնագրի կամ Կանխավճարային Վարկային Ծրագրի Համաձայնագրի հրաժարման մասին:

(ժ) Ծրագրի մատակարարման Համաձայնագիրը դադարում է կամ որևէ այլ պատճառով ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր է ճանաչվում, կորցնում է ուժը և վավերականությունը:

(ի) Ծրագրի համար անհրաժեշտ որևէ հնարավորություն կամ ծրագրի հետ կապված ցանկացած այլ նշանակալի հարց կորցնում է ուժը և վավերականությունը:

(լ) Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է իր վճարման պարտավորությունների ընդհանուր կասեցումը իր պարտատերերին կամ սկսում է

բանակցություններ իր վճարային պարտավորությունների վերաձևակերպման մասով, կամ ՀՀ-ն դադարում է լինել Արժույթի Միջազգային հիմնադրամի անդամ կամ կասեցվում է ՀՀ-ի իրավունքները օգտագործել ընդհանուր և որոշակի միջոցները կամ հնարավորությունները:

(խ) Ցանկացած այլ իրադարձության կամ հանգամանքի դեպքում, որոնք Փոխատուն սահմանում է, որ ամենայն հավանականությամբ, ունեն էական բացասական ազդեցություն:

7.2 Դեֆոլտի դեպքում կիրառվող գործողություն

Դեֆոլտի առաջանալուց հետո ցանկացած ժամանակ Փոխատուն կարող է, ծանուցման միջոցով Փոխառուին՝ ա) դադարեցնել վարկային ծրագիրը, որից հետո վարկային ծրագիրը պետք է անմիջապես դադարեցվի, և/կամ, բ) հայտարարել, որ Վարկը ամբողջությամբ կամ մասնակիորեն, այլ գումարների հետ միասին կուտակվել կամ չի մարվել սույն Համաձայնագրի պայմաններով պետք է անմիջապես մարվի, որից հետո դրանք համարվում են վճարման ենթակա, և/ կամ, գ) հայտարարել, որ Վարկը ամբողջությամբ կամ մասնակիորեն, այլ գումարների հետ միասին կուտակվել կամ չի մարվել սույն Համաձայնագրի պայմաններով՝ դառնում է վճարման ենթակա ըստ պահանջի, որից հետո դրանք համարվում են վճարման ենթակա՝ Փոխատուի պահանջով: Փոխատուն հետագայում իրավունք ունի իրականացնել որևէ այլ նմանատիպ գործողություններ, այնպես, ինչպես Փոխատուն իր հայեցողությամբ կարող է որոշումներ կայացնել:

8. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1 Երաշխիքներ

Որպեսզի Փոխատուն ցանկությունություն հայտնի ներգրավվել սույն Համաձայնագրի կնքման, Վարկի մշակման և պահպանման գործում, Փոխառուն կատարում է հետևյալ երաշխիքները՝

(ա) Այն ինքնիշխան անժամկետ գոյությունը պահպանող պետություն է, որը պատշաճ կերպով ներկայացվում է ֆինանսների նախարարության կողմից, որն ի վիճակի է լինել հայցվոր և պատասխանող կողմ, ունի ուժ և իշխանություն կրել սույն Համաձայնագրի պայմանները և իրականացնել իրավունքները, կատարել պարտականությունները: Բոլոր գործողությունները պետք է լիազորված լինեն Փոխատուի կողմից սույն Պայմանագրի պարտավորությունների կատարումը պատշաճ կերպով իրականացնելու նպատակով: Ունի սեփական ակտիվներ, որոնք գտնվում են Փոխառուի անսահմանափակ տնօրինման ներքո:

(բ) Փոխառուն որևէ Համաձայնագրի կողմ չի հանդիսանում, որը կարող է բացասաբար ազդել ցանկացած առարկայական ձևով Փոխառուի ֆինանսական դրության վրա:

(գ) Սույն Համաձայնագրի իրականացումը, մատակարարումը և կատարումը չի խախտում ցանկացած գործող օրենքի որևէ դրոյթին կամ Փոխատուի կողմից կիրառվող իրավական կարգերին (այդ թվում, սուբսիդիաների հետ կապված ցանկացած օրենքներ կամ կանոնակարգեր):

(դ) Սույն Համաձայնագրի պատշաճ կերպով և իրավականորեն իրականացումը և կատարումը լիազորված է Փոխառուի կողմից և բոլոր լիցենզիաները,

համաձայնությունները և կոմերցիոն գրանցումները կամ իրականացման հետ կապված անհրաժեշտ հաստատումները (կառավարական կամ այլ), սույն Համաձայնագրով մատակարարումը կամ իրականացումը ձեռք են բերել և գտնվում են լիարժեք վավերականության և ուժի մեջ: Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Փոխառուի իրավական, օրինական և պարտադիր պարտավորությունը՝ կիրառել պայմաններին համապատասխան:

(ե) Փոխառուն չի ստեղծել, կամ համաձայնել ստեղծելու ցանկացած գրավադրում, գանձում կամ այլ անվտանգության միջոցառումներ ընդհանուր կամ որևէ իր ակտիվների մի մասի համար՝ ապահովելով որևէ Արտաքին կամ Երկարաժամկետ Ներքին Պարտավորությունները:

Վերոգրյալում օգտագործված «Արտաքին պարտավորություն» արտահայտությունը նշանակում է ցանկացած գումարային պարտավորություն, որը վերցված է բանկից, ֆինանսական հաստատությունից կամ այլ կազմակերպությունից, որը գտնվում կամ ռեզիդենտ է Հայաստանից դուրս:

<<Երկարաժամկետ Ներքին Պարտավորություններ>> նշանակում է Փոխառուի յուրաքանչյուր պարտավորություն, այն գումարի համար որը վերցվել է Փոխատուից, ներառված է վերոգրյալ ձևով, մշտական կամ ռեզիդենտ է Հայաստանում՝ ունենալով ավելի քան 5 (հինգ) տարի վերջնական մարման ժամկետ:

(զ) Փոխատուին փոխանցվում է բոլոր փաստերի ամբողջական հրապարակումը, որոնք նյութական են և պետք է պատշաճ կերպով կատարվեն, հայտնի են մեկ անձին կամ անձանց առաջարկելով զարգացնել կամ գումարները հասանելի դարձնել Փոխառուին և հնարավորություն տալ փոխատուին ձեռք բերել Փոխառուի ֆինանսական վիճակի ճշմարիտ պատկերը:

(է) Դեֆոլտի ոչ մի իրադարձություն չի կարող նշանավոր ազդեցություն ունենալ վարկի կայացման վրա: և ոչ մի այլ նշանավոր իրադարձություն (ծանուցումը, ժամկետի լրանալը, որոշման էականության կամ կատարման որևէ այլ կիրառելի վիճակի կամ ցանկացած համակցության հանգամանքը), որը հանդիսանում է դեֆոլտ մեկ այլ ցանկացած պայմանագրով կամ փաստաթղթով, որոնք պարտադիր են վարկառուի համար կամ դրա հետ կապված որևէ այլ դրույթ կամ կարգ, որը կարող է ունենալ էական բացասական ազդեցություն:

(ը) Ոչ մի դատավարություն, արբիտրաժային կամ վարչական վարույթներ տեղի չեն ունենա Փոխառուի դեմ առանց նրա գիտության, որոնց բացասաբար որոշելը կարող է ունենալ էական բացասական ազդեցություն կամ որը կարող է սույն Պայմանագրի կիրառելիությունը դնել կասկածի տակ:

(թ) Սույն Համաձայնագրում Փոխառուի պարտավորությունները պարզ են, ընդհանրացված և անվերապահ և դասվում են և կդասվեն նվազագույնը հավասարազոր մյուս այլ ներկա և ապագա Փոխառուի չապահովված և առանց ստորադաս պարտականությունների հետ (այդ թվում՝ պայմանական պարտավորությունները) բացառությամբ այնպիսի պարտավորությունների, որոնք պարտադիր են օրենքով և ոչ թե պայմանագրով:

(ժ) Ցանկացած փաստացի տեղեկատվություն, որը Փոխառուի կողմից տրամադրվում է Փոխատուի հետ կապված սույն Համաձայնագրի բանակցությունների և նախապատրաստման կամ դրանցում հիմնավորվածի հետ, ճիշտ են բոլոր առումներով և ապակողմնորոշիչ չեն՝ ինչպես տրամադրման, այնպես էլ՝ նշված ամսաթվով (եթե այդպիսիք կան): Փոխառուի կողմից Փոխատուին տրամադրված ֆինանսական կանխատեսումները պատրաստվել են վերջին պատմական տեղեկատվության հիման վրա և դրա հիման վրա էլ կատարվել են ողջամիտ ենթադրություններ: Որևէ այլ

տեղեկատվություն չի տրամադրվել կամ թաքցվել, որը կարող է հանգեցնի նախկինում տրամադրված տեղեկատվության անհամապատասխանությանը կամ ապակողմնորոշիչ է ցանկացած նյութական առումով: Բացի այդ, ցանկացած այդպիսի տեղեկություն չի անտեսում էական փաստեր և ոչինչ չի փոխվել սկսած այն պահից երբ այդ տեղեկատվությունը փոխանցվել է Փոխատուին, եթե հակառակը բացահայտվի, կարող է բացասաբար անդրադառնալ այդ անձի սույն Համաձայնագրում ներգրավվելու որոշմանը:

(ի) Անհրաժեշտություն չկա, որ սույն համաձայնագիրը ներկայացվի, արձանագրվի կամ անդամագրվի որևէ դատարանի կամ այլ ՀՀ իրավական մարմնի միջոցով, նաև անհրաժեշտություն չկա, որ որևէ կնիք, գրանցում, կամ հարկային վճարումներ և գործարքներ կապված սույն Համաձայնագրի հետ նախատեսված լինեն դրանց միջոցով:

(լ) Ավստրիայի օրենքի ընտրությունը, որպես սույն Պայմանագրի կառավարման օրենք պետք է ընդունվի և կատարվի Հայաստանում, ցանկացած իրավարար վճիռ կապված սույն Համաձայնագրի հետ պետք է ընդունվի և գործի Հայաստանում:

(խ) Սույն Համաձայնագիրը կնքելուց Փոխառուն գործում է իր անունից, այլ ոչ թե, որպես գործակալ կամ հոգաբարձու որևէ այլ երրորդ կողմի անունից:

Սույն 8.1 հոդվածում սահմանված նկարագրությունները և երաշխիքները կատարվում են Ստորագրման օրը և համարվում են կրկնվող Փոխառուի կողմից պահանջվող կամ կատարվող յուրաքանչյուր փոխառության ամսաթվին և յուրաքանչյուր վճարման և մարման ամսաթվին՝ հղում կատարելով գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների վրա:

8.2 Պարտավորություններ

Փոխառուն սույնով պարտավորվում սույն օրվանից սկսած և այնքան ժամանակ, քանի դեռ վճարվելիք գումարը դեռ մարված չէ կամ ցանկացած փոխառություններ, որոնք դեռ կարող են կատարվել:

(ա) Փոխատուին պետք է ներկայացնի արագ գրավոր ծանուցում և մանրամասն տեղեկություն՝ հետևյալի մասին.

- ✓ ցանկացած դատավարություն, արբիտրաժային կամ վարչական վարույթներ, որոնք ընթացիկ են կամ սպառնում են Փոխառուին և որոնք կարող են ունենալ էական բացասական ազդեցություն:
- ✓ ցանկացած (այլ) հարց, որը կարող է ակնկալվել որ նյութապես կբացասաբար է ազդում Փոխառուի կողմից իր պարտականությունների կատարման մասով սույն Համաձայնագրի շրջանակներում կամ կարող է ունենալ էական բացասական ազդեցություն:
- ✓ Սույն Պայմանագրի, Կանխավճարային վարկային պայմանագրի, Ծրագրի մատակարարման պայմանագրի և Ծրագրի հետ կապված անհրաժեշտ ցանկացած լիազորություններ, վավերացումներ կամ արձանագրություններ:
- ✓ Ցանկացած դեֆոլտի կամ այլ իրադարձության առաջացման դեպքում, որ մասին ծանուցվել է, որի ժամկետը լրացել է, էականության որոշման կամ իրականացվող ցանկացած այլ կիրառելի պայման կամ ցանկացած վերոհիշյալ համադրության դեպքում, կարող է Դեֆոլտ համարվել նկարագրելով ցանկացած քայլերը, որոնք հաղթահարելու համար հաշվի են առնվում՝ տեղյակ լինելով մեղմել նմանատիպ ազդեցության մասին: Փոխառուն ցանկացած ժամանակ պետք է փոխատուին

տրամադրի, եթե փոխատուն պահանջում է, Փոխառուի կողմից ստորագրված հավաստագիր, առ այն որ Դոֆուլտի կամ այլ իրադարձության ծանուցումը ներկայացնելով, լրացված ժամկետը, էականության որոշումը կամ որևէ այլ կիրառելի պայմանի իրականացումը կամ ցանկացած վերոգրյալի համադրությունը կարող է սահմանվել, որպես չլուծված Դեֆուլտ, նշելով նման դեպքերը և քայլերը, եթե այդպիսիք կան, ձեռնարկելով դրանց շտկման քայլերը:

- ✓ Բոլոր ծանուցումները կամ այլ փաստաթղթերը ուղարկված Փոխառուի կողմից իր պարտատերերին ընդհանուր առմամբ (կամ ցանկացած դասակարգումով) և միևնույն ժամանակ ուղարկված են համարվում:
- ✓ Նմանատպ հետագա տեղեկատվություն, որոնք կարող են անհրաժեշտ լինեն գործող բանկային վերահսկողական օրենքների և կանոնակարգերի և/կամ համապատասխան ստանդարտ բանկային պրակտիկայի համաձայն:

(բ) անհրաժեշտ է կատարել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք հնարավորություն են տալիս ծավալել բիզնես գործունեություն: Այն պետք է համապատասխանի բոլոր կիրառելի օրենքների և Սույն Պայմանագրի, Կանխավճարային վարկային պայմանագրի, Ծրագրի մատակարարման պայմանագրի և Ծրագրի հետ կապված անհրաժեշտ ցանկացած լիազորությունների, վավերացումների կամ արձանագրությունների բոլոր պայմաններին և պետք է ձեռք բերել, և անհապաղ թարմացնել ժամանակ առ ժամանակ նման հետագա լիազորությունները, վավերացումները կամ արձանագրությունները, իրականացնել այնպիսի հետագա գրանցումներ, որոնք անհրաժեշտ են հնարավորություն ընձեռելու համար սույն Պայմանագրի և Կանխավճարային վարկային Ծրագրի Համաձայնագրի իր պարտավորությունները: Փոխառուն Փոխատուի խնդրանքով պետք է ներկայացնի լիազորությունների, վավերացումների կամ արձանագրությունների վավերացված պատճենները:

(գ) պետք է ապահովի իր պարտավորությունները սույն Համաձայնագրի շրջանակներում որոնք դասվում են և կդասվեն հավասարազոր մյուս այլ ներկա և ապագա անապահով և առանց դասակարկման պարտականություններին, բացառությամբ օրենքով պարտադիր պարտավորությունների: Փոխառուն չպետք է ստեղծի, կամ համաձայնություն տալ ստեղծելու որևէ գրավադրում, գանձում կամ այլ անվտանգության միջոցառումներ ընդհանուր կամ որևէ իր ակտիվների մի մասը ապահովելու համար, երաշխավորել ցանկացած պարտականություն կամ երաշխավորել քանի դեռ վարկը չի երաշխավորվել Փոխատուի պահանջների համապատասխան:

(դ) անհրաժեշտ է պահպանել սույն Պայմանագրի ֆինանսավորման համապատասխան գրառումները, ապրանքների և/կամ ծառայությունների ապացույցները, հրապարակել դրանց օգտագործումը Ծրագրում, արձանագրել Ծրագրի առաջընթացը, այդ թվում դրանց ծախսերը և արտացոլել հետևողականորեն պահպանված և միջազգայնորեն ընդունված հաշվապահական պրակտիկայի գործառնությունների և Փոխառուի ֆինանսական վիճակը:

(ե) անհրաժեշտ է թույլ տալ, որ փոխատուի ներկայացուցիչները վերահսկեն ծրագիրը, ծրագրի կատարողին և մատակարարողին, ապրանքները և ծառայությունները մատակարարումը համաձայն ծրագրի մատակարարման Պայմանագրի և ցանկացած առնչվող տվյալներ և փաստաթղթեր պետք է հատկացնել Փոխատուին, քանի որ փոխատուն հիմնավորում է պահանջում վարկի ծախսերի վերաբերյալ: Ծրագրի և

հանձնարարականներին և հստակորեն համաձայնում է, որ այն համապատասխանում է Փոխատուի կողմից ցանկացած գործողության կանանգործության նման հանձնարարականներից հետո:

10.2 Ծանուցումներ

Ցանկացած ծանուցում կամ փաստաթուղթ որը այլ կերպ է սահմանված սույն Համաձայնագրում պետք է փոխանցվի կամ ուղարկվի ֆաքսով, էլեկտրոնային փոստով, փոստային ծառայություններով: Փոխատուի և Փոխառուի ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով հաղորդակցման դեպքում, Փոխառուն պատասխանատվություն է կրում Փոխատուի բոլոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ նման հաղորդակցման ժամանակ, մասնավորապես, Փոխառուն պատասխանատու է ինֆորմացիայի ոչ իրավական հիմքերի, կեղծիքների ու սխալ փոխանցման համար:

Սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած ծանուցում պետք է ներկայացվի անգլերեն լեզվով: Սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած փաստաթուղթ պետք է ներկայացվի անգլերեն, եթե համաձայնեցված է Փոխատուի հետ ոչ անգլերեն տարբերակը, ուղեկցվի վավերացված անգլերեն թարգմանությամբ և թարգմանությունը կգերակայվի, քանի որ այն հանդիսանում է նորմատիվ կամ այլ պաշտոնական փաստաթուղթ: Եթե սույն համաձայնագիրը նախատեսում է, որ Փոխառուն պարտավոր է ներկայացնել փոխատուին փաստաթղթի բնօրինակը կամ վավերացված պատճեն, քանի դեռ Փոխատուն չի տեղեկացրել որ ընդունում է նման փաստաթղթի չվավերականացված պատճենը:

Ցանկացած ծանուցումներ կամ փաստաթղթեր պետք է ուղարկել:

Փոխատու՝ Erste Bank der oesterreichischen Sparkassen AG, Graben 21, 1010 Vienna, Austria
Վարկային հարցերի հետ կապված՝ Transaction Banking Sales, Obere Donaustrasse 21, 1020 Vienna, Austria

attn.: Mr. Thomas Oberndorfer

phone: +43 (0)50100 13826

fax: +43 (0)50100 913826

e-mail: thomas.oberndorfer@erstegroup.com

Ադմինիստրատիվ հարցերով՝ Corporate Operations AT Börsegasse 14, 1010 Vienna, Austria

attn.: Mrs. Roswitha Müller-Graf

phone: +43 (0)50100 18526

fax: +43 (0)50100 918526

e-mail: roswitha.mueller-graf@erstegroup.com

Փոխառու՝ ՀՀ, Ֆինանսների Նախարարություն, ք.Երևան Մ.Ադամյան 1

Կամ եթե կողմերը փոխանցել են այլ կոնտակտային հասցե և համար: Ցանկացած հաղորդակցություն կամ փաստաթուղթ, որը փոխանցվել է փոխատուին գործում է փոխատուի կողմից ստացման պահից:

10.3 Վերնագրերի Փոփոխություններ և նկարագրական տեղակատվություն

Սույն Համաձայնագրի կատարված յուրաքանչյուր փոփոխություն կամ ձևափոխում պետք է լինի գրավոր և միայն պետք է պատշաճ ստորագրված լինի երկու կողմերի կողմից:
Սույն Համաձայնագրում գրված վերնագրերը սահմանված են հարմարության համար և չեն սահմանվում կամ սահմանափակվում իրենց դրույթներով:

10.4 Հրաժարականներ, Կուտակային միջոցներ

Փոխատուի մասով սույն համաձայնագրի շրջանակներում իրավունքների և միջոցների նկատմամբ իրականացրած որևէ ձախողում կամ հետաձգում, կդիտվի որպես հրաժարում, ինչպես նաև որևէ իրավունքի կամ միջոցի անհատական կամ մասնակի իրականացումը, որը կանխարգելում է իրավունքների կամ միջոցների հետագա ցանկացած կամ այլ իրականացում կդիտվի որպես հրաժարում: Սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքները և միջոցները հանդիսանում են կուտակային և չեն բացառում օրենքով նախատեսված որևէ իրավունք կամ միջոց:

10.5 Փոխհատուցում

Փոխառուն պետք է անհապաղ Փոխատուի պահանջով փոխհատուցել ցանկացած ծախս, վնաս (ներառյալ վնասի շահույթը) կամ պատասխանատվություն, որը առաջացել է՝
ա) եթե Փոխառուն ճիշտ ժամանակին չի վճարել սույն Համաձայնագրում նշված ցանկացած գումար:

բ) ցանկացած առաջացած դեֆոլտի դեպքում:

գ) ֆինանսավորման, կամ ֆինանսավորման համար պայմանավորվածություններ կատարելու, Փոխառուի կողմից պահանջված փոխառության, որոնք սակայն չեն կատարվել սույն Համաձայնագրի որևէ մի կամ որոշ դրույթների կիրառման արդյունքում (բացառությամբ միայն Փոխատուի կողմից անզգուշությամբ ձախողման պատճառով):

դ) վարկը (կամ վարկի մի մասը) չի վճարվել համաձայն կանխավճարի ծանուցման:
Փոխառուն պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր կոնկրետ դեպքի ցանկացած կորստի կամ ծախսի համար՝ փոխառության միջոցների հաշվին, պայմանագրով նախատեսված ֆինանսավորման օգտագործված ցանկացած գումարի համար սույն Համաձայնագրի շրջանակներում, նաև ցանկացած գումարի մարման կամ կանխավճարի կամ վարկի մասով:

Եթե Փոխառուի կողմից կատարված վճարումների (համաձայն հոդված 4.2-ի) կամ վարկի վաղաժամկետ վճարման պատճառով (ըստ ցանկության կանխավճար և չեղյալ համարում), կամ այլ որևէ պատճառով, սույն Համաձայնագրի սահմանված ցանկացած վճարումներ, որոնք ստացվել են ոչ իրենց վճարման ժամկետների համաձայն, Փոխառուն պետք է վճարի փոխատուի պահանջով ցանկացած գումար, որը պահանջվում է փոխհատուցել փոխատուին լրացուցիչ կորուստների, վճարների, ծախսերի համար, որոնք կարող են առաջանալ, նման վճարների արդյունքում: Փոխառուն պատասխանատվություն է կրում ցանկացած կորուստի կամ ծախսի համար՝ փոխառության միջոցների հաշվին, պայմանագրով նախատեսված ֆինանսավորման օգտագործված ցանկացած գումարի համար սույն Համաձայնագրի շրջանակներում, նաև ցանկացած գումարի մարման կամ կանխավճարի կամ վարկի, ինչպես նաև շահույթի կորստի համար:

Սույն Համաձայնագրով Փոխատուին կատարվող ոչ մի վճարում ենթակա չէ քննարկման կամ որևէ դատարանի կարգավորման կամ հակառակ դեպքում պետք է իրականացնի Փոխառուի պարտավորությունները, որոնց նկատմամբ այն արված է քանի դեռ և մինչև ամբողջ վճարումը չի ստացվել այն արժույթով, որով համապատասխան գումարը պետք է վճարվեր (այսուհետ, «Արժույթային պարտավորություն»), և այն չափով, որով ցանկացած նման գումարի վճարում պարտավոր է վերաձևակերպվել փաստացի արժույթի պարտականություններով, պարտականություններում գումարը արտահայտված է արժույթով, պակաս է այն գումարից, որը ի սկզբանե պարտք է Փոխատուին համաձայն արժույթի պարտականության, փոխատուն պետք է ունենա լրացուցիչ և առանձին գործողությունների միջոցներ Փոխառուի դեմ, որպեսզի վերականգնի գումարը փոխարկումից հետո համաձայն Արժույթային պարտականության, որը հավասար կլինի պակասը լրացնելու գումարի: Փոխառուն հրաժարվում է այն իրավունքից, որ կարող է ունենալ ցանկացած իրավասություններում համաձայն սույն Համաձայնագրի վճարել որևէ գումար այն արտարժույթով կամ արժույթային միավորով, որով այն պետք է վճարվի:

10.6 Մասնակի անվավերություն

Կողմերը համաձայնում են, որ ցանկացած ժամանակ, երբ սույն Համաձայնագրի յուրաքանչյուր դրույթներ լինեն կամ դառնան անվավեր, ուժը կորցրած կամ անարդյունավետ, այդ հանգամանքը չի կարող ազդել մնացած դրույթների վավերականությանը կամ արդյունավետությանը և Համաձայնագիրը կպահպանի իր վավերականությունը և արդյունավետությունը, բացառությամբ անվավեր, ուժը կորցրած կամ անարդյունավետ դրույթների, առանց որևէ երրորդ կողմի միջամտության, ով վիճում ու ապացուցում է կողմերին պահպանել սույն Համաձայնագիրը նույնիսկ առանց անվավեր, ուժը կորցրած կամ անարդյունավետ դրույթների:

Անվավեր, ուժը կորցրած կամ անարդյունավետ դրույթները ենթակա են փոխարինման այնպիսի վավերական և արդյունավետ դրույթներով, որոնք իրավական և տնտեսական առումներով ամենամոտն են այն դրույթներին, որոնք կողմերը նախատեսել էին կամ պետք է նախատեսեին ունենալ Սույն Համաձայնագրում, եթե նրանք հաշվի են առել այդ կետը համաձայնագրի կնքման ժամանակ:

10.7 Նշանակում

Փոխառուն *իրավունք չունի* նշանակվել, հանձնարարել և փոխանցել Համաձայնագրի ստանձումը, կամ այլ կերպ փոխանցել կամ թույլատրել ետ հանձնել սույն Համաձայնագրով բոլոր կամ որևէ իր իրավունքները, առավելությունները կամ պարտավորությունները:

Փոխատուն *կարող է* ցանկացած ժամանակ վերանշանակել իր իրավունքները կամ փոխանցել Համաձայնագրի ստանձումը, այլ կերպ փոխանցել կամ թույլատրել ետ հանձնել սույն Համաձայնագրով սահմանված իր իրավունքները և պարտականությունները:

10.8 Տվյալների բացահայտում

Փոխառուն սույնով համաձայնում է, որ

- Փոխատուն կարող է բացահայտել ցանկացած տվյալներ, որոնք իհարկե ի հայտ են գալիս փոխառուի հետ գործարար հարաբերության ժամանակ՝ բանկերի համար որպես հաճախորդ, մասնավորապես՝ պարտատիրոջ պաշտպանության նպատակներով, վերահսկողական կանոնակարգերի կողմից պահանջվող համախմբման համար համաձայն ավստրիական բանկային օրենքի կամ բանկային գործարք ներհրականացնելու համար,
- Սուբսիդիաների դիմումի դեպքում Փոխատուն կարող է փոխանակել ֆինանսավորման հետ կապված յուրաքանչյուր փաստաթուղթ, տվյալ կամ այլ տեղեկատվություն համապատասխան հաստատության և դրա ֆինանսավորման գործընկերների հետ,
- Համաձայն Ավստրիական Բանկային օրենքի (պարբերություն 38, 5-րդ կետ, պարբ. 2) բացահայտման համարկարգավորող մարմինը պետք է համարվի վավերական սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում: Բացի այդ, փոխատուն իրավունք ունի բացահայտել ցանկացած տվյալներ (ներառյալ փաստաթղթավորումը) և յուրաքանչյուր տնտեսական տվյալներ ցանկացած վարկառուի վերաբերյալ՝ երաշխավորների և անվտանգությունն ապահովող ցանկացած այլ անձանց կամ ընկերությունների, ինչպես նաև վարկավորմանը/ ֆինանսավորմանը մասնակցող ցանկացած ֆինանսական հաստատությունների և ապահովագրական ընկերությունների, որոնք ի հայտ են գալիս փոխառուի հետ գործարար հարաբերության ժամանակ: Բացահայտման նպատակը ռիսկերի գնահատումն է:

Սույն Համաձայնագիրը կազմված է երկու բնօրինակից: Յուրաքանչյուր Կողմ ստանում է մեկ օրինակ:

[Ամիս ամսաթիվ]

[Ամիս ամսաթիվ]

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Sparkassen AG

Erste Bank der oesterreichischen

Հավելված 1

Վճարման գործընթաց և Վճարման հանձնարարական

Սույն Համաձայնագրի Հոդված 1.1-ով սահմանված փոխառությունները կարող են վճարվել Փոխատուի կողմից միայն ուղղակի վճարման եղանակով՝ Արտահանման Ծրագրի կոնսորցիումի ղեկավարին (լինելով վճարումների ստացող կոնսորցիումի անունից Մատակարարման Պայմանագրի շրջանակներում) համաձայն հետևյալ ընթացակարգերի՝

Ծրագրի արտահանողը պետք է Մատակարարման Պայմանագրով նախատեսված փաստաթղթերը ուղարկի Ծրագրի Գնողին և այդ փաստաթղթերի պատճենը պետք է ուղարկի փոխատուին: Փաստաթղթերի պատճենները ստանալուց հետո Փոխատուն առանց զենման փոխանցում է դրանք Փոխառուին էլ.փոստով խնդրելով իր վճարման հանձնարարականը՝ վճարելու Փոխառության համապատասխան գումարը Արտահանողին: Վճարման հանձնարարականը պետք է պարունակի հետևյալ առանձնահատկությունները, պետք է պատշաճ կերպով ստորագրված լինի Փոխառուի կողմից և պետք է ուղարկվի Փոխատուին Ֆաքսով՝

- Պետք է հղվի Պայմանագրին և պետք է ներկայացվի փոխանցվելիք փոխառության համապատասխան փաստաթղթավորումը,
- Պահանաջվող փոխառության գումարը:

Այն դեպքում, եթե Փոխատուն չի ստացել վճարման հանձնարարականը Փոխառուից՝ համապատասխան փոխառության համար և չի ստացել որևէ առարկություն համապատասխան Փոխառության վճարման մասով Արտահանողից էլ.փոստով 7 օրվա ընթացքում նմանատիպ էլ.նամակ ստանալուց հետո, Փոխառուն սրանով անդարձորեն լիազորում է փոխատուին ավտոմատ՝ հաջորդ օրվան հաջորդող աշխատանքային 7 (յոթ) օրվա ընթացքում, իրականացնել վճարումը Արտահանողին համապատասխան փոխառությունը ստանալու համար:

Փոխատուն էլեկտրոնային փոստով 3 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ծանուցի Փոխառուին յուրաքանչյուր փոխառության վճարման մասին:

Հավելված 2

Իրավաբանական Կարծիքի Ձևաչափ

Ում: Erste Bank der oesterreichischen Sparkassen AG , att. Mr. Thomas Oberndorfer , Obere Donaustrasse 21, 1020 Vienna, Austria

Հարգելի Տիկնայք/Պարոնայք

1.700.000 Եվրո գումարի Արտահանման վարկային ծրագրի Համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր)

Հղում ենք կատարում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Ֆինանսների նախարարության (Այսուհետ՝ Փոխառու) և Erste Bank der oesterreichischen Sparkassen AG, Vienna (Այսուհետ՝ Փոխատու) միջև կնքված պայմանագրին, թվագրված **[ամիս/ամսաթիվ]** և առնչվելով **Արտահանման վարկային ծրագրի Պայմանագրի հետ, որի նկատմամբ [մենք գործում ենք, որպես իրավական խորհրդատու Փոխառուի և Փոխատուի համար]**։ Բոլոր արտահայտությունները սահմանվում են Համաձայնագրով ունեն նույն իմաստները։

Մենք ուսումնասիրել ենք բնօրինակները և պատճենները սույն փաստաթղթով հաստատվա ծփաստաթղթեր՝

- (i) Համաձայնագիր;
- (ii) Փոխառուի Լիազորված մարմնի Համաձայնագիրը հաստատող որոշումները
- (iii) **[տեղադրեք որևէ այլ կապակցված փաստաթուղթ, եթե այդպիսիք կան]**։

Մենք արել ենք նմանատիպ այլ հարցումներ և ուսումնասիրել ենք նմանատիպ այլ փաստաթղթեր, քանի որ մենք տեղիները համարել հաստատել ներքոգրայլը։

Մենք Հաստատում ենք՝

1. Փոխառուն հանդիսանում է ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը, որին պատշաճ կերպով ներկայացնում է Ֆինանսների Նախարարությունը, հարատև է և կարող է լինել պատասխանող և հայցվոր: Փոխառուն իշխանություն ունի իրականացնելու իր բիզնեսը, իրականացնելով իր սեփական գույքով և այլ ակտիվներով:
2. Փոխառուն իշխանություն ունի իրականացնել, մատակարարել և կատարել իր պայմանագրային պարտականությունները և Փոխառուն իրավունք ունի վարկ վերցնել, բոլոր անհարժեշտ գործողությունները կատարելու Փոխառուին նույնը լիազորելու՝ չսահմանափակելով նրա իրավունքները:
3. [Պարոն/Տիկին] [անունը] Փոխառուն /ները/ պատշաճ կերպով լիազորված է իրականացնել և մատակարարել համաձայն պայմանագրի և այլ փաստաթղթերի, պայմանագրի հետ կապված ծանուցումները և դրանց ստորագրությունները Փոխառուի կողմից իրավաբանորեն պարտադրվում են:
4. Պայմանագրի իրականացումը, պայմանագրի շրջանակներում մատակարարումը, պարտականությունների կատարումը համապատասխան դրույթներով չի կարող լինել:

ա) ցանկացած առկա կիրառելի օրենքի, կանոնադրության, կանոնի կամ կանոնակարգի կամ որևէ դատողություն կամ որոշման հակասում, որին Փոխառուն ենթարկվում է;

բ) **[Հակասություն կամ վեճ Փոխառուի բյուջեի դրույթներին, եթե այդպիսիք կան]**

գ) Փոխառուի մասնակցությամբ ցանկացած պայմանագրի կամ այլ գործարքի հետ կապված վեճը կամ որևէ պայմանների ցանկացած խախտման արդյունքը կամ դեֆոլտը:

5. Ի գիտություն մեզ, ի շնորհիվ մեր տեղեկացվածության ոչ մի դատավարություն, արբիտրաժային կամ վարչական վարույթներ տեղի չեն ունենա Փոխառուի դեմ, որոնց բացասաբար որոշելը կարող է ունենալ էական բացասական ազդեցություն Փոխառուի բիզնեսի, ակտիվների կամ ֆինանսական պայմանների վրա:
6. Փոխառուն չի խախտելու կամ դեֆոլտ չի ճանաչելու որևէ Համաձայնագիր, որը վերաբերվում է պարտքին, որում նա մասնակից է կամ որով նա պարտավրված է (ոչ էլ այն, ինչպես նաև տալով ծանուցման կամ դադարեցման ժամանակ, կամ երկուսն էլ կարող է լինել):
7. Փոխառուն չի պահանջում ոչ մի համաձայնություն, թույլտվություն, լիցենզիա կամ գրանցման հաստատում կամ կառավարության, դատարանի կամ պետական մարմնի կամ հաստատության դեկլարացիա սույն պայմանագրի իրականացման, մատակարարման, վավերականության համար: Այսուհետ Փոխառուի կողմից իրականացվելիք պարտականությունները առանց սահմանափակման ներառում են՝ համաձայն պայմանագրի Փոխառուի կողմից փոխառության ընդունում և Փոխառուի կողմից բոլոր վճարները՝ պայմանագրի դրույթներին համապատասխան:
8. Պարտադիր չէ ապահովել պայմանագրի օրինականությունը, վավերականությունը, կիրառելիությունը, որ այն կամ որևէ այլ գործիք է ներկայացվել, գրանցվել կամ ընդգրկվել որևէ դատարանում, պետական գրասենյակում կամ այլուր Հայաստանում կամ որ որևէ կնիք, գրանցում կամ նմանատիպ հարկեր են վճարվել Հայաստանում պայմանագրի մասով կամ պայմանագրի հետ կապված և Համաձայնագիրը պատշաճ ձևով պատրաստ է իրականացման Հայաստանում:
9. Փոխառուի պայմանագրով նախատեսված պարտականություններն են. Փոխառուի ընդհանուր և անվերապահ պարտավորությունները հավասարազոր են բոլոր ներկա և ապագա չապահովված և ոչ ենթակա պարտավորություններին /այդ թվում պայմանական պարտավորությունները/, բացառությամբ նման պարտավորությունների, որոնք պարտադիր նախընտրելի են օրենքով և ոչ թե պայմանագրով:
10. Պայմանագրի շրջանակներում Փոխառուի կողմից կատարված ոչ մի պարտադիր տեղական հարկեր կամ այլ վճարներ չեն տրամադրվում, ինչպես նաև ցանկացած պարտադիր վճարներ, որոնք առաջանում են պայմանագրի կատարման կամ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար չեն վճարվում: Պայմանագրի հետ կապված գրանցման, կնքման, նմանատիպ հարկերի կամ գանձումների վճարները կատարվում են Հայաստանում կիրառման պահից սկսած:
11. Համաձայնագիրը Ավստրիական օրենսդրությամբ կառավարվելու ընտրությունը վավերական է և Ավստրիական օրենսդրությունը համապատասխանորեն կկիրառվի Հայաստանյան դատարանի կողմից, եթե Համաձայնագիրը կամ դրանից բխող որևէ պահանջ հանդես գա, ուստի այն կլուծվի Ավստրիական օրենսդրության իրավասությունների ապացույցների համապատասխան: Փոխառուի կողմից Վիենայում գործող իրավական դատարանի դիմաց հայց ներկայացնելը արբիտրաժային դատարան վավերական է և պարտադիր Փոխառուի համար: Վարկառուն իրավունք չունի պահանջել անձեռնմխելիություն կապված իր կամ իր ակտիվների հետ համաձայն Հայաստանի օրենսդրության,

որևէ իրավական վարույթի հետ կապված, ինչպես նաև իրավունք չունի պահանջելու հաշվանցում՝ պայմանագրի հետ կապված, կամ հակընդդեմ հայց ներկայացնել նմանատիպ գործընթացից առաջացած կիրառվող վճռին կամ կարգին:

12. Պայմանագրի վերաբերյալ կատարված արբիտրաժային տրիբունալի վճիռ/որոշումը կճանաչվի վավեր, վերջնական և կիրառելի համաձայն ՀՀ օրենսդրության և օրենսդրական ակտերի:
13. Եվրոյի դրամական որոշումը կճանաչվի և կկիրառվի ՀՀ-ում:
14. Փոխառուն ենթարկվում է Քաղ. Օրենսգրքին պայմանագրի շրջանակներում իր պարտականություններից ելնելով: Պայմանագրի ուժի մեջ մտնելը և կատարումը Փոխառուի կողմից համարվում է մասնավոր և առևտրային գործողություններ: Պայմանագրի անձեռնմխելիությունը վավեր է և պարտադիր է Փոխառուի համար:
15. Փոխատուն ռեզիդենտ չի և չի էլ համարվում, նրա բնակվելը, բիզնես իրականացնելը ենթակա է Հայաստանում հարկման միայն բանակցությունների միջոցով: Սույնը վերաբերվում է նաև Պայմանագրի կիրառմանը կամ իրականացմանը, պայմանագրով նախատեսված ապրաքնների մատակարարմանը, Փոխառուից պայմանագրի շրջանակներում որևէ վճարում ստանալուն:
16. ՀՀ օրենքները չեն պարտադրում, որ փոխատուն սույն համաձայնագրով նախատեսված մատակարարումը կամ ծառայությունների մատակարարումն իրականացնելու համար լինի արտոնագրված, որակյալ կամ այլ կերպ իրավասու լինի Հայաստանում բիզնես իրականացնելու:
17. Որևէ այլ փոխառության կամ վարկի գրանցում ՀՀ Կենտրոնական Բանկի հետ չի պահանջվում: Ոչ մի թույլտվություն կամ ակտեր ՀՀ Կենտրոնական բանկի հետ անհրաժեշտ չեն:

Այս հաստատումն սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով: Մենք չենք հաստատում որևէ այլ օրենսդրական ազդեցություններ:

Հարգանքով

Հավելված 3

Ծրագրի մատակարարման պայմանագրի վերաբերյալ հաստատման ձևաչափ

Ումից: Վաագներ-Բիրո Ավստրիա Սթեյջ Սիսթեմ ԷՅՋԻ
Leonard-Bernstein-Strasse 10
A-1220 Vienna

Ում: Erste Bank der oesterreichischen Sparkassen AG
att. Mr. Thomas Oberndorfer
Obere Donaustrasse 21
A-1020 Vienna

Ամիս/ամսաթիվ:

1.700.000 Եվրոյի Արտահանման վարկային ծրագրի Համաձայնագիր Erste Bank der oesterreichischen Sparkassen AG և Հայաստանի Հանրապետության ծրագրի ներկայացուցիչ ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության միջև <<Արամ Խաչատրյան համերգասրահի վերագինում>> (այսուհետ՝ Համաձայնագիր)

Հարգելի Տիկնայք/Պարոնայք,

Մենք սույնով հաստատում ենք, որ բոլոր պայմանները (**Նախնական վարկային ծրագրի և Արտահանման վարկային Պայմանագրերի հետ կապված այլ ցանկացած նախապայմաններ**) ՀՀ Մշակույթի նախարարության և կոնսորցիում ընկերությունների միջև կնքված մատակարարման պայմանագրի արդյունավետության հետ կապված՝ Վաագներ-Բիրո Ավստրիա Սթեյջ Սիսթեմ ԷՅՋԻ-ն որպես կոնսորցիումի ղեկավար, Սալզբերներ Սթեյջթեք աուդիո-վիդեո մեդիան սիսթեմ Ջիեմբիեյջ-ը Գերմանիա, ԷՅԹԻՍԻ Էլեկտրոնիկ Թիաթր Կոնտրոլս Ջիեմբիեյջ-ը Գերմանիա, և Արթսթեք ՍՊԸ-ն Երևան, Հայաստան, որպես կոնսորցիումի անդամներ հավաստում են, որ Ձեզ ներկայացված Մատակարարման Համաձայնագիրը լիովին ուժի մեջ է:

Վիեննա, [Ամիս/ամսաթիվ]

.....
[Կոնսորցիումի ղեկավարի ստորագրությունը, Վաագներ-Բիրո Ավստրիա Սթեյջ Սիսթեմ ԷՅՋԻ]

Հավելված 4

Լիազորված գործակալի նշանակման ձևաչափ

Ում: Erste Bank der oesterreichischen Sparkassen AG
att. Mr. Thomas Oberndorfer
Obere Donaustrasse 21
A-1020 Vienna

Ամիս/ամսաթիվ:

300 000 Եվրոյի Արտահանման վարկային ծրագրի Համաձայնագիր Erste Bank der oesterreichischen Sparkassen AG և Հայաստանի Հանրապետության ծրագրի ներկայացուցիչ ՀՀ Ֆինանսների նախարարության միջև <<Արամ Խաչատրյան համերգասրահի վերազինում>> (այսուհետ՝ Համաձայնագիր)

Հարգելի Տիկնայք/Պարոնայք,

Որպես Հայաստանի Հանրապետության դեսպան Վիեննայում, Ավստրիա, ես ընդունում եմ իմ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անունից ինձ՝ որպես Փոխառուի, լիազորված գործակալի նշանակումը՝ ծառայելու որպես գործընթացի գործակալ պայմանագրի շրջանակներում:

Իմ Վիեննայի հասցեն հետևյալն է:

Ավստրա, Վիեննա, 1140, Հադիգաս 28 (Hadikgasse 28, 1140 Vienna, Austria)

ԼԳ.: [անունը]

Հեռ. [համարը]

Ֆաքս. [համարը]

Էլ. փոստ. [հասցեն]

Եթե վերոգրյալ կոնտատակտային տվյալներում որևէ փոփոխություն լինի, ուստի այդ մասին պետք է տեղեկացնել գրավոր, առանց ուշացման:

Հարգանքներով

.....

Հայաստանի դեսպան

Հավելված 5

Գոյություն ունեցող անվտանգության նկատառումներ

[Հեղափոխություններ, եթե այդպիսիք կան]